

Մենք՝ երեխաներս, ամեն օր հանդիպում ենք անարդարությունների: Ես մտնում եմ խանութ և տեսնում, որ մեծ հերթ է գոյացել: Եվ նկատում եմ, որ որոշ մարդիկ փորձում են խախտել հերթը, դա ինձ շատ է բարկացնում:

Շատ հաճախ փողոցում նկատում եմ մարդկանց, ովքեր ծխախոտի մնացորդը գցում են գետնին, մինչդեռ քիչ հեռվում աղբաման կա դրված: Շատ երեխաներ պաղպաղակի կամ կոնֆետի թղթերը նույնպես չեն գցում աղբամանը: Դա ինձ ևս բարկացնում է:

Համացանցում նկատում եմ լատինատառ գրություններ և մի շարք ուղղագրական սխալներ: Շատ ազգեր չունեն իրեց գիրը, իսկ մենք ունենք, սակայն ըստ արժանվույն չենք գնահատում:

VII բ դասարանի աշակերտուհի Հունանյան Անի, Սևան թիվ 4 հիմնական դպրոց